ԱՐՓԻ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Գագիկ Հովսեփյան

Հեռախոս՝ +37493.909051

Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրը գտնվում է պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհի Վայոց ձոր գավառում: Գյուղը հիմնադրվել է 1965 թվականին Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ գյուղից տարհանված բնակչության բազայի հիման վրա: Բնակավայրը գտնվում է Արփա գետի հովտում, Եղեգնաձոր մարզկենտրոնից 8 կմ արևմուտք: Գյուղի միջով է անցնում Երևան-Մեղրի միջպետական ավտոմայրուղին:

Արփին սահմանակից է հյուսիս-արևմուտքում՝ Աղավնաձոր, հյուսիս արևելքում՝ Գետափ, արևելքում՝ Եղեգնաձոր, հարավում՝ Արենի, Գնիշիկ բնակավայրերին: Ծովի մակերևույթից գյուղի միջին բարձրությունը 1100 մ է:

Արփիի միջով հոսող Արփա գետը հարուստ է կողակ և բեղլու ձկնատեսակներով, իսկ ակունքում՝ կարմրախայտով: Գյուղը հարուստ է սիլիկատի հանքավայրերով: Կլիման խիստ չոր է և ցամաքային:

Արփի բնակավայրի վարչական սահմաններում է գտնվում Էրթիջ հին գյուղատեղին, որն ըստ ավանդության, որպես բերդ է ծառայել տարածաշրջանի համար: 1930-ական թվականներին վերջին բնակիչները լքել են գյուղը խմելու և ոռոգման ջրի բացակայության պատճառով:

Արփին խմելու ջրով ապահովող միակ բնական աղբյուրը գտնվում է Հին գյուղատեղիին հարակից «Ջրով վանք» ուխտատեղիի տարածքում: Ըստ ավանդության, այս աղբյուրի ջուրն ունի մաշկային հիվանդություններ բուժելու հատկություն: Գյուղն ապահովված է նաև ոռոգման ջրով:

Բնակավայրում կա 4 հուշարձան-կոթող, ի հիշատակ՝ Մեծ եղեռնի զոհերի, Հայրենական պատերազմում զոհված գնիշիկցիների, նույն պատերազմի հերոս Վահիկ Լևոնյանի և Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ և գրադարան: Դպրոցը հիմնանորոգված է և բարեկարգ, որի դահլիճը հանդիսանում է գյուղում կազմակերպվող մշակութային միջոցառումներն իրականացման վայր: Արփիում գործում է գինու 2 արտադրամաս:

Բնակչության հիմնական մասն զբաղված է գյուղատնտեսությամբ (հողագործություն և անասնապահություն), զարգացած է նաեւ մեղվաբուծությունը: Գյուղն ունի նաև բենզալցակայան, շուկա և հանգստի գոտիներ: Արփա գետը, հատկապես ամռանը, սիրված հանգստի վայր է զբոսաշրջիկների և տեղաբնակների համար:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Արփի գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 12 հուշարձան: